



ՅԱՆ-ՓՈԼԱՏ

Ավալ ժամանակին ըլնում աշխինում մի թագավոր, ունենում
ա օխտը տղա. վեցը մենծ են ըլնում, մինը քոմքից պուճուր,
ըսենց՝ ասսը—տասնէրկու տարեկան։ Էդ վեցը, շոմքի լավ հա-
սել ին, ընենց որ աշխար մննելու վախտն էր, էթում են իրանց
հորն ասում.— Թագավորն ապրած կենա, ուզում ենք պսակվի,
ի՞նչ կասես։

— Կա'վ, ո'րդիք, — ասում ահերը, — ասեք տենամ ո'րդ ում
աղջիկն ասիրե՛ էթամ ուզեմ, բերեմ պսակեմ։

— Զէ՛, թագավորն ապրած կենա, — ասում են, — մենք օխտն
աղջեր ենք, օխտս էլ մի տանից պտի աղջիկ ուզենք, օխտն էլ
մի հալալ մոր կաթնակեր, որ մեր մեջը խորթ ու փորթ լընի ու
քեզանից եղը մեր թագավորությունը շքանդվի, շկործանվի։

— Ա՛յ որդիք, հմի ո'րդիան բերեմ ընենց աղջկեք, որ օխտն
էլ մի տանից ըլնեն, մի հալալ մոր կաթնակեր։

— Թագավորն ապրած կենա, — ասում են, — մեզ հրաման
տո՛ւ, էթանք գտնենք. աշխարե՛-աշխար, երկրե-երկիր ընկնենք,
ճարենք, բերենք։

— Կա'վ, կարաք՝ գնացե՛ք, — ասում ա թագավորը, — աստոծ
ձեզ բարի ճամփա տա, բա՛րով էթաք, բա՛րով գաք։

Էս վեց տղեն ա՝ տասնըհինգ տարվա ճամփի պաշար են վեր

սմում, էթում իրանց հոր ձեռը պաշում, մոր ծիծը պաշում, ընկ-նում ճամփա:

Գալիս են գալիս, շատն ու քիչն աստոծ գիտա, մի սարի դո-շի, մի շայիր-շիման տեղ վեր են գալի, շաղիր տալի, որ գշերն ըտե մնան, մի քիչ հաց-մաց ուտեն, առավոտն էլի վե կենան էթան իրանց ճամփեն:

Սրանց թողանք ըստե, զանք խարար տանք պումպու աղպա-րիցը:

Խեղճ էրեխեն խարար շիլնում աղպորտանց գնալը. իրիկումբ գալիս ա տոմ, տենում շկան:

Էթում ա մորն ա հարցնում. մերն ասում ա.— Բա չե՞ս ասի՝ ըսե'նց, ըսե'նց բան, գնացել են աղջիկ բերելու

— Դո՞րթ:

— Դո՞րթ. տասնըհինգ տարվա ճամփի պաշար են վե կալե. գնացեն:

— Բաս ե՞ս էլ եմ էթում:

— Ո՞ւր:

— Նրանց կուշտը:

— Ա՛յ որդի, դեռ հլա էրեխա ես, ճամփի շես գիտա, զադ շես գիտա, ո՞ւր ես էթում:

— Զէ՞ս, որ չէ՞ս,— ասում ա,— պտի էթամ, ո՞ր պտի էթամ:

Վերջը մերը որ շատ զոռում ա, տենում ա շիլնում, մի հետ սատանի ծին նի ա էլե, չի ուզում վե զա, հարցնում ա.— Ո՞րդի, հմի որ էթում ես՝ լա՛վ, ճամփի հմար ասպար-մասպար ո՞մես. բալի շին-շանավար ա ուստ գալի, կա՞րս շուշլարը տա:

— Բա ի՞նչ անեմ,— ասում ա:

— Ա՛յ, ինչ արա՝ գնա հորդ կուշտը, ասա. «Թագավորն ապ-րած կենա, էթում եմ աղպորտանցս եննուցը, Սև թուրդ տա՛ս կապեմ վրես, ճամփին բալի շին-շանավար ա ուստ գալի», տես-ինչ կասի:

— Լա՛վ, կէթամ:

Էթում ա հոր կուշտը.— Թագա՛վորն ապրած կենա,— ասում ա,— էթում եմ աղպորտանցս եննուցը:

— Ա՛յ տղա,— ասում ա թագավորը,— Հո չե՞ս գժվե. դժ-գեռ էրեկվա էրեխեն ես, ճամփի շես գիտա, զադ շես գիտա, էթում ես, ի՞նչ անես:

— Զէ՛, թագա՛վորն ապրած կենա, լի՛նի. մի հետ մուրազ
ֆմ արե, պտի էթամ:

— Դո՛ւ գիտաս, ո՛րդի, էթում ես՝ գնա՛, մեղքն ու վարձքը
շուռ շինքը:

— Թագա՛վորն ապրած կենա, էթալը կէթամ, համա ճամփի
հմար ասպար-մասպար չունեմ, ո՛նց անեմ. բալի դուշման, յա
զին-ջանավար ա ուստ գալի: Ի՞նչ կըլնի Սև թուրդ տաս՝ կա-
պիմ վրես:

— Ա՛յ քու սարվացնողի շինքը կոտրվի, — ասում ա թագա-
վորը, — էդ թուրդ իմ աշքի լսիցը շատ եմ սիրում, համա որ ուզում
ես, ճարս ի՞նչ, պտի տամ:

Էն սհաթն էթում ա, Սև թուրդ բերում, կապում տղի մեջքը:

— Ա՛ռ, ո՛րդի, — ասում ա, — քանի էս թուրդ վրեդ ա՝ ըսկի
մի՛ վախի, քու աղաքին էլ զադ չի դիմանա. սա՛րի տաս, քա՛րի
տաս, բո՛լի տաս՝ կկտրի կանցկենա: Հեռվանց որ դուշման գալու
ըլնի՝ էն սհաթը էդ թուրդ զնիցը դուս կգա, կընկնի աղաքդ, որ
իմանաս, քեզ հազիր պահես:

Տղեն հոր ձեռը պաշում ա, էթում մոր կուշտը:

— Հորդ Սև թուրն առա՞ր, — հարցնում ա մերը.

— Հա՛, — ասում ա, — առաւ: Էլ ինձ հո զադ չի՛ պակաս:

— Ո՞նց չէ, ձի ո՞մես. էնքամ ճամփեն հո ոտով շպտի էթաս:

— Զէ՛, — ասում ա, — ինձ ո՞րդիան ա ձի:

— Բա՛ս էլի գնա հորդ կուշտը, ասա. «Թագավորն ապրած
կենա, էսքամ ճամփա պտի էթամ, ձի չունեմ. ի՞նչ կըլնի Սև ձիդ
տաս, նիլնեմ էթամ»: Զի՛, ձի՛, ձի՛ եմ ասում, որ երկնքի աստ-
ղերի հեննա ա հաղ անում:

— Լա՛վ, էթամ ըտ էլ ուզեմ:

էթում ա հոր կուշտը. — Թագա՛վորն ապրած կենա, — ասում
ա, — էսքամ ճամփա պտի էթամ. ձի էլ չունեմ. լի՛նի Սև ձիդ
տաս, նիլնեմ էթամ:

— Ի՞նչ ասեմ, ո՞րդի, — ասում. ա թագավորը, — քու սարվաց-
նողի շինքը կոտրվի: Սադ թագավորությունս ուզեիր լավ էր, քան
թե իմ Սև ձին, որ էս աշքիցս էն աշքը շեմ փոխում. համա որ
ուզում ես, ճա՛րս ինչ, պտի տամ: Գնա՛ տար, ո՞րդի. տա՛ր, ըտ
էլ քեզ դուրքան:

Տղեն ուրախ-ուրախ էթում ա Սև ձին գոմիցը դուս քաշում,

հայաթումը կանացնում, էթում հոր ձեռը պաշում, մոր ծիծը պաշում, թոնում ձին՝ յա՛լլա:

Էթում ա, էթում ա, շատն ու քիչն աստոն գիտա, մի շայիր-շիման տեղ, մի աղբրի կշտի վեր ա գալի, մի քիչ հացմաց ուտի, էլի վե կենա էթա իրա ճամփեն: Որ հաց կուտի կպըրծնի՝ թուրը զնիցը դու կգա, կընկնի աղաքը:

— Ա՛յ հարա՛յ, — կասի, — բաս դուշման պտի գա աղաքաւես վախտով իմ զիսի ճարը տենամ:

Կասի ու թուրը ձեռին տեղն ու տեղը կկաննի, կկենա, կկենամի սհաթ, էրկու սհաթ, իրեք սհաթ՝ կտենա էն դիցը մի զո՞վտ ագալի, մի զո՞վտ ա գալի, մի զո՞վտ ա գալի, ոնց որ մի եքա սար: Չամի գերանը շինել ա թեշի, եքա շաղացաքար՝ թեշուն գլուխ, մի եքա էրկաթ՝ թեշուն ծիծեռ ու պարան մանելոն գալիս ա դպահրան:

Տղին որ կտենա թե չէ՝ ձեն կտա. — Ա՛յ հողածին, դո՞ւ ըստերա՞նք, օձն իրա պորտովը, զուշն իրա թեռվը, ընշանք հմի իմ ահիցը ըստերանք ոտ չի կոխե, զու ո՞նց ես սիրու արե, էկե: Ո՞նց ես, էս թեշու պոշովը մի դըրը տամ՝ էթաս, էլ եղ շգաս:

— Լա՞վ, — կասի տղեն, — էլ խի՞ պտի վախենամ. աստոծմի ֆողի քեզ ա տվե, մի ֆողի՝ ինձ: Ուզո՞ւմ ես, արի կովենք. էն վախտը մալում կանի՝ ե՞ս եմ զոշաղ, թե դու

Ղովտն էս որ լսում ա, գհա՛ ա գժվում, կատաղում: Ձեռի թեշին վրա ա անում տղին, որ տա բանֆողի անի՝ նա Սև թուրը աղաքին բռնում ա: Թեշին ո՞ր չի դիպնում թրին՝ հազար կտոր աընում, թափում գետինը: Ջա՞նըմսան տղեն թուրը քաշում ա. Քյալի միջիցը ո՞ր չի շեպում, զովտը արենկոլու ընկնում ա գետինը: Վրա ա հասնում, նրա քիթ ու պոռնգը, անկաշները կտրատում, ածում խորչինը, էլ եղ վե կենում, էթում իրա ճամփեն:

Էթում ա, էթում, շատն ու քիչն աստոծ գիտա, է՛ս սարը դիպնում, է՛ն սարը դիպնում, վերջը էրկու սարի միջի մի շայիր-շիման տեղ վեր ա գալի: Ոտը ձիու օրդանգուիցը հանում ա թե չէ՝ էն սհաթը թուրը զնիցը դու ա գալի, ընկնում աղաքը:

— Ա՛յ հարա՛յ, — ասում ա, — էլի զուշման պտի գա աղաքաւ թուրը վեր ա ունում, հազիր կաննում, դուշմանի ճամփեն պահում: Մի քիչ կենում ա, կենում, տենում ա էն դիցը էլի մի զո՞վտ ա գայի. մի զո՞վտ ա գալի, որ մի պոռշը երկնքումն ա,

մինը՝ գետընքումը. ծծերն էլ էնքամ էրկեն, որ գեննին քաշ ա գալի: էկա՞վ, էկա՞վ՝ դուզ դպա տղեն:

— Այ հողածին, դու ըստե՞րանք. օձն իրա պորտովը, զուշն իրա թևովը ընշանք հմի իմ աճիցը չի կարացե ըստե ուր դնի, դու ս'նց ես սիրտ արե էկե:

Ղովտն էս ասում ա թե չէ՝ բերանը բաց վրա ա պրծնում, որ տղին փորը քաշի. տղեն թուրը ո՞ր վրա չի բերում քյալին ծեփում՝ զովտը գլխի վրեն յա՞լլա ընկնում ա գետինը, ֆողին տալի: Վրա ա հասնում, էս զովտի էլ քիթ ու պոռմգը, անկաջները կըտքատում, ածում խուրջինը: Հստե մի պումուր մնում ա, դինշանում, էլ եղ վե կենում, էթում իրա ճամփեն:

Էթում ա, էթում, շատն ու քիշն աստոծ գիտա, հեռվանց տենում ա մի սարի վրա հրեն մի սիպտակ շադիր: Թուրը հանում ա, ձիու գլուխը բաց թողում:

— Ո՞վ եք, — ձեն ա տալի հեռվանց, — ի՞նս եք, զի՞նս եք, ջանա՛վար եք՝ դուս էկեք, թե չէ որ էկա, իմաց կացեք մահներդ կտամ:

Զադրի մարդիկը վախլություններից էն սհաթը դուս են զալի:

— Ֆլա՛ն թագավորի տղեքն ենք, — ասում են:

— Բա էդ ո՞ւր եք. էթում, — հարցնում ա:

— Մենք օխտն աղպեր ենք, էթում ենք մեզ հմար կնիկ բերենք, որ օխտն էլ մի տանից ըլնեն՝ մի հալալ մոր կաթնակեր:

Էս լսում ա թե չէ՝ ալրիալը ճանանշում ա. էն սհաթը ձիուցը վեր ա գալի, աղպորտանց ճանովը փաթթվում, ուրախությունից լաց ըլնում:

— Ե՞ս, — ասում ա, — ձեր պումուր աղպերն եմ, բա չե՞ք ճանանշում:

— Զո՞րթ:

— Ղո՞րթ:

Վարավուրդ են անում տենում, որ գրուստ իրանց պումուր աղպերն ա, ուրախանում, աշխարով մին են ըլնում: Նո՞ր նստում են ըստե իրար հեննա զրից անում՝ ըստիան, ընդիան, դաղդան, դաշդան հարցնում, ասում, խոսում, մասլահաթ անում:

— Դո՞ւ խի էկար, — հարցնում են աղպրտինքը: — Մենք մեր հորնըմորը մենակ թողինք՝ հերիք չէ՞ր. խեղճերը, ով գիտա, մեղ իրա էնքամ միտք անեն, միտք անեն, որ օր-ծերություն դարդա-

վարամ ըլնեն, մեռնեն: Դու արի՛ եղ դա՛ռ, գնա՛, ընշանք էս ա-
մընք էլ որդի որի ա կգանք:

Ինչ անում են, չեն անում՝ պումուր աղպորը շեն կարում ճամ-
փից եղ դարձնի:

— Չէ՛, որ չէ՛, — ասում ա, — կուզի մորթեք, կուզի քերթեք.
Ես եղ դառնողը շեմ: Ո՞ւր էթաք՝ պտի հեններդ գամ. սաղ կմնաք՝
սաղ կմնամ. կմեռնեք՝ կմեռնեմ:

Նրանք էլ տենում են որ չէ՛, չիլնում, ասում են. — Հա՛վ, դո՞ւ
գիտաս, կենում ես՝ կա՛ց. մեղքն ու վարձքը քու շլինքը:

Զադիրը հավաքում են, վե՛ կենում, որ իրանց ճամփեն էթան:

Ըստե պումուր աղպերը նրանցից ջոկնվեց. — Ե՛ս, — ասեց, —
Էս ճամփովը կէթամ, դուք՝ էդ: Թե իրար գտանք՝ հո գտանք, թե
չէ հո՝ աստոծ աջողա, հալրաթ սաղ-սալամաթ կէթանք մեր հոր-
նըմոր կուշտը՝ ընդե կտենանք իրար:

Աղպորտանց հեննա մնաս բարով արեց, էն ճամփեն բռնեց
գնաց:

Գնաց, գնաց՝ լի՛ս գնաց, գշե՛ր գնաց, մի օր, էրկու օր, իրեք
օր, շորս օր՝ վերջը մի եքա քալավի ուստ էկավի:

Էս քալավի տեղը աղաք մենծ քաղաք էր էլե. էրկու զովտ
էկել ին քարութանդ, բրիշակ արե, գնացե ու սաղ նրա խալիսը
թողե տակին: Էս է՛ն էրկու զովտն ին, որ ճամփին պումուր տղին
ուստ էկան, նրանց մենծ թիքեն անկաշը թողաց:

Մտագ էս քալավեն, ասեց. «Տենամ ի՛նչ կա, ինչ շկա»:

Դես գնաց, դեն գնաց, տեհավ մարդ-մադաթ շկա: Վերջը որ
շատ դես-դեն ընկավ, ման էկավ՝ տեհավ մի եքա կոլոլ քար:

— Դու արի՛, — ասեց, — սրա տակին խաղինա ըլնի. վեր
ունեմ տեհնամ:

Քարը գլորեց, տեհավ, ըհը՛, մի ծակ. գլովսը կուացրեց, որ
մտիկ տա, մի դաֆիլ ուտը սոթ տվեց¹, գըրըմփալեն ընկավ մե-
ջը: Դու մի ասի՛ բտե ֆոր ա էլե:

Տղեն Փորի միջին դե՛ս մտիկ տվեց, դե՛ն մտիկ տվեց, տենա
ընդիան դուս գալու ճար, իլլաջ կա՛, թե չէ: Է՛ս դիհը գնաց, է՛ն
դիհը գնաց, տեհավ հրե՛ մի պումախից ճրագի լիս ա էրևում:

Ասեց. — Բա՛վի, ըստե խսանարդի ա էլե:

¹ Տպագիր տեքստում՝ սլվեց, ուղղումը բանահավաքին է (Ս. Կ.):

Թուրք հանեց.— Յա՛ սովոր Կարապետ, դու ըլնես իմ կռանք,— ձեն տվեց ու գնաց աղաք:
Գնաց, գնաց, տեհավ օղլուշաղի հարա՛յ-հրոցի ձեն ա դալի:
Հս որ լսեց՝ կանեց:
— Ո՞վ եք,— գոռաց,— ի՞նս եք, զի՞նս եք, շանա՛վար եք՝
ձեն հանեք:

— Մենք ֆլա՛ն թագավորի աղջկեքն ենք,— ձեն տվին ըն-
գիւն:— Բա դու ի՞նչ մարդ ես:
— Ես էլ ֆլա՛ն թագավորի տղեն եմ,— ասեց:

Որ իմացագ աղջկեք են, նոր որ սիրտը հանդարտեց: Թուրք
խրեց տեղը, գնաց կշտները, տեհավ դորթ որ օխտն աղջիկ՝ օխտն
էլ մեկ-մեկուց սիրուն:

— Բա՛ մեն-մենակ էս ֆորումը ի՞նչ եք անում,— հարցրեց:
— Մեր հերը էս քաղաքի թագավորն էր,— ասեցին աղջկե-
քը:— Սրանից մի ամիս աղաք, էրկու զովտ էկան սաղ քաղաքը
քարուքանդ արին, տակնուվրա արին, մեր հորնըմորն էլ սըպա-
նեցին, թողին, գնացին. մենակ մենք պրծանք էդ արենխում շա-
նավարների ձեռիցը, փախանք, էկանք մտանք էս ֆորը, տափ կա-
ցանք, որ մըզ էլ շգան ուտեն: Թագավորի ցեղ, բա դո՞ւ ո՞նց պըր-
ժար, չե՞ս վախսենում, որ գան մենծ թիքեն անկազդ թողան:

— Հա՛, թե որ սաղ ըլնեն, — ասում ա: Նոր հանում ա խուրշ-
նիցը էրկու զովտի թիթ ու պոռւմքը, անկախները նրանց շանց ա
տալի ու մին-մին նաղլ անում, ոնց որ ես ձեզ նաղլ արի:

Աղջկեքը զովտերի սըպանվիլը որ լսում են՝ ուրախանում,
աշխարով մին են ըլնում: Օխտն էլ վազում են, ընկնում տղի
ճտովը:

— Թագա՛վորի ցեղ, — ասում են, — աստոծ քու կռանն ըլնի,
որ մեզ ազատեցիր էդ մարդակեր շանավարների ձեռիցը: Սրա-
նից դենք՝ մենք քունն ենք, դու՛. մերը. ի՞նչ կուզես արա՛. կու-
զես՝ տար զուրը քցա՛, կուզես՝ մորթա՛, կուզես՝ սաղ թո՛ղ, քեֆը
քունն ա:

— Ես էլ հենց ձեզ ի ման գալի, — ասում ա տղեն: — Մենք
օխտն աղպեր ենք, ուզում ենք պսակվի: էս քա՛նի տարի ա, էկել
ենք աշխարե-աշխար, երկրե-երկիր, սարե-սար, քարե-քար ընկե,
որ օխտն աղջիկ ճարենք՝ օխտն էլ մի հալալ մոր կաթնակեր: Որդե
գնացինք, որդե հարցրինք՝ շգտանք ու շգտանք. անջախ որ ասուու

աշքը վրներս քաղցրացավ, ձեզ մեզ դամաթ արեց: Դուք հմի էն
ասեք, մեզ կա՛ռնեք,— հարցնում ա:

— Խի՛ շենք առնի, դեռ աղանձանք էլ շենք անի¹,— ասում ենտ

— Դե բաս որ¹ ըտենց ա, դուք ըստե կացեք, ես էթամ աղ-
պորտանցս գտնեմ, բերեմ. նոր ըստիան իրար հեննա վե կենանք
էթանը մեր հոր քաղաքը, ընդե դափ ու զուռնով, քեֆով, ուրա-
խությունով, օխտն օր, օխտը զշեր հարսանիթ անենք:

— Հա՛վ, — ասում են աղջկեքը, — գնա՛, աստոծ քեզ հետ,
համա տե՛ս՝ էլի գաս, հա՛:

— Կգա՛մ, արխեին կացեք,— ասում ա ու ճամփա ընկնում:

Պուճուր աղպերն ա՝ էթում ա, էթում՝ է՛ս սարը դիպնում, է՛ն
սարը դիպնում, վերջը գալիս ա տենում մի սարի դոշի աղպրտին-
քը վեր են էկե, շադիր տվեն:

— Հը՛, աղպրտինք,— ասում ա, — գտա՞ք, թե չէ:

— Չէ՛, շգտանք, դո՞ւ

— Ըսկի մի՛ք ասի, որ ես գտել եմ՝ լա՛վ եմ գտեն: Օխտը քիր,
օխտն էլ թագավորի աղջիկ. ընենց էլ մի սի՛րուն, մի նա՛շխուն,
որ արեին ասում են՝ դու մեր մտի, մենք դուս ենք գալի, ընենց
մի սիրունիկ զադեր են: Ես էկա ձեզ էլ կանչեմ, տանեմ շանց
տամ. թե հավան կկենաք, մարդս մինն առնենք, վեր ունենք
էթանք:

— Բա ո՞րդի են, — հարցրին, — էթա՛նք տենանք:

— Էթա՛նք, — ասեց, — հենց էս ճամփեն բռնենք, դուզ էթանք:

Պուճուր աղպոր էկած ճամփեն բռնում են՝ գալի: Գալիս են
գալի, շատն ու թիւն աստոծ զիտա, մի օր, էրկու օր, իրեք օր՝
հասնում են էն խարաբա քաղաքը: Ֆորի քարը դեն են քցում, կախ
ցլուսմ ֆորը, օխտը քվորն էլ ընդիան հանում լիս աշխարք:

— Մե՛նծ աղպեր, էս մենծ քիրը քեզ. շունքի դու քոմմքիցս
էլ մենծ ես: Լա՛վ:

— Նրա՛նից պուճուր աղպեր, ըս էլ քեզ կհասնի: Ըս էլ լա՛վ:

— Ըս էլ սրա՛նից պուճուրին, լա՛վ:

— Ըս էլ նրան, լա՛վ:

— Ըս էլ դրան, լա՛վ:

— Ըս էլ մեկելին, լա՛վ:

¹ Տպագիր տեքստում բացակայում է, ավելացված է բանահավաքի ձեռ-
քով (Ա. Կ.):

— Պումուր քիրն էլ զաթի ինձ կհասնի ու ինձ կհասնի, շունքի քոմմքիդ պումուրը ե՞ս եմ:

Պումուր քիր մի՛ ասի՛ մի՛ մարգարիտ, արեգակի կտոր, հրեշտակ ասա, քվորտանց քոմմքին էլ գլխում էր իրա սիրունությունովը:

— Է՛, աղպրտի՛նք, հա՛լալ փայ արի, թե չէ՛, — հարցնում ապումուր աղպերը:

— Հա՛լալ, հա՛լալ, — ձեն են տալի աղպրտինքը, — քոմմեք էլ ռազի ենք:

— Դե բաս հմի էթա՛նք:

— էթա՛նք:

Օխտն աղպեր, օխտը քիր վեր են կենում ըստիան ճամփաընկնում: Գալիս են գալի, շատն ու քիշն աստոծ գիտա, մի իրեք ճամփի միջի վեր են գալի, շաղիր տալի, որ մի պումուր գինջանան, հաց-մաց ուտեն, էլ եդ վե կենան էթան իրանց ճամփեն: Ըստե դես են ընկնում, դեն են ընկնում, ըստե էթում, ընդե էթում, ման գալի, որ ասես, մի պուր ջուր էլա չեն գտնում, որ բերեն կերակուր էֆեն, յա խմեն:

— Բա ո՞նց անենք, — ասում են:

— Ո՞նց պտի անենք, — ասում ա պումուր աղպերը, — դուք ըստե կացեք, ես մի ձիս նիլնեմ, էթամ ըստերանք ման գամ, բալի առու, զադ գտնեմ, մի քիշ ջուր լցնեմ բերեմ:

Աև ձին նիլնում ա՝ թռնում: Դես ա ընկնում, դեն ա ընկնում, է՛ս սարը շափում, է՛ն սարը շափում, որ ասես, զրի թրիշա չի գտնում: Վերջը որ շատ ման ա գալի, տենում ա մի քարափի տակի, ընը՛, հրես մի ֆոր:

Ասում ա, «Կաց քար քցեմ տե՛նամ, բալի միջին ջուր ա րլենում»: Վեր ա ունում մի քար քցում ֆորը. քցելու բաշտան լրրպապալեն դիպնում ա զրին:

— Էս լավ էլավ, — ասում ա, — էթամ աղպրտանցս իմաց սամ, գանք ըստե շաղիր տանք. հազիր ջուրն էլ մոտիկ՝ կհանենք, կրանացնենք:

Թողում ա գալի:

— Աղպրտի՛նք, — ասում ա, — էկե՛ք որ ֆլան տեղը լրֆորեմ դտե. էթանք ընդե շաղիր տանք,

— Լա՛վ, — ասում են, — էթա՛նք:

Զադրները հավաքում են, բերում են շրջորի կշտին վե տալի:-
— Դե', — ասում ապումուր աղպերը, — ո՞վ կմննի ֆորը չուր

Հանի:

— Ես, — էն դժիցը ձեն ա տալի մենծ աղպերը:

Բերում են պարանը կապում մենծ աղպոր մեջքը՝ կախ տալի:

Մի թիշ որ էթում ա, էթում, ձեն ա տալի. — Ա՛յ հարա՛յ, էթ-
վե՛ցի, խաշվե՛ցի, փոթոթվե՛ցի՝ քա՛շեք:

Աղպրտինքը քաշում են հանում:

— Հմի ի՛նձ, — ձեն ա տալի սրանից պումուրը:

— Լա՛վ, հմի էլ քեզ:

Բերում են սրան կախ տալի:

Սա էլ որ մի պումուր ներքն ա էթում, ձեն ա տալի. — Ա՛յ
հարա՛յ, էրվե՛ցի, կրակվե՛ցի, խաշվե՛ցի, տապակվե՛ցի՝ քա՛շեք:

Պարանը քաշում են, սրան էլ են հանում:

— Հմի էլ ի՛նձ, — ձեն ա տալի նրանից պումուրը:

— Լա՛վ, հմի էլ քեզ:

Բերում են պարանը կապում մեջքը՝ կախ տալի:

Դա էլ մի պումուր տեղ էթում ա, չի էթում, գոռում ա. — Ա՛յ
հարա՛յ, էրվե՛ցի, խաշվե՛ցի¹, տապակվե՛ցի², փոթոթվե՛ցի՝
հա՛նեք:

Քաշում են, դրան էլ են հանում: Մախլա՛ս, զիխներդ ինչ ցա-
վացնեմ, ըսենց վեց աղպերն էլ իրար եննուց կախ են ըլնում
ֆորը, վեցն էլ ճամփի կիսին ձեն են տալի. — էրվեցի՛, խորով-
վե՛ցի, տապակվե՛ցի՝ հա՛նեք, — քաշում են, հանում:

Վերջը դորք գալիս ա քումմքից պումուր աղպորը:

— Աղպրտի՛նք, — ասում ա, — հմի ի՛նձ քաշ արեք տե՛նամ:
Ճամատ ինձանից ձեզ ամանաթ, ինչքամ ձեն կտամ. «էրվե՛ցի,
խաշվե՛ցի, տապակվե՛ցի³, քա՛շեք», ըսկի անկազ չեք անի՛ հա՛
պարանը կթողաք, ընշանք հասնեմ:

— Լա՛վ, — ասում են, — արի՛:

Բերում են պարանը կապում պումուր աղպոր մեջքը, կախ
տալի:

^{1, 2, 3} Տպազիր տեքստում բանահավաքի ձեռքով շնչված են. Թողնում ենք,
ինչպես տպագիր տեքստում է (Ծ. 4.):

Մի քիչ էթում ա, էթում, ձեն ա տալին.— Ա՛յ հարա՛յ, էր-
վե՛ցի, խաշվե՛ցի, փոթոթվե՛ցի¹, քաշե՛ք,

Անկաջ շեն անում, հա՛ կախ են տալի, կախ են տալի՝ ըն-
շանք հասնում ա անտակը:

— Աղպրտի՛նք, հա՛սա, — ձեն ա տալին: — Դե հմի փարխաջը
կախ տվեք, լցնեմ:

Վիրեից փարխաջը թողում են ֆորը: Նա ընդե լցնում ա՝ քա-
շում են, լցնում ա՝ քաշում են, լցնում ա՝ քաշում են, ընշանք ձեն
են տալին: — Թո՛լ ա, կա՛ց պարանը կախ տանք, դո՛ւ արի:

Պարանը կախ են տալի, կապում ա մեջքը:

— Դե՛, քաշե՛ք, — ձեն ա տալի ֆորիցը:

Քաշում են: Քաշում են, քաշում են, քաշում են՝ կիսաճամփին
աղպրտանց միտքը փոխվում ա:

— Լա՛վ, — ասում են իրար, — հմի որ դրան հանում ենք, ինչ
էրեսով պտի էթանք տուն: Նա պումուր տեղովը էնթամ զոշաղու-
թյուններ արեց, չէ՛ կէթա մեր հորը մին-մին նազլ կանի, կպար-
ծենա, մեղ կթողա նրա կշտին սնկրես. բա մենք էն վախտը գե-
տինք մննենք լավ չի՛: Հազիր լա՛վ ա ռաստ էկե, էկեք պարանը
կտրենք, էլ եղ քցինք ֆորը. Թող ընդե մնա, սովածությունից մեռնի:
Տանք որ կհարցնեն, կասենք. «Չենք տեհե», պրժավ գնաց:

Վեցով էլ խոսքները մին են անում, դանակը քցում, պարանը
կտրում: Պումուր աղպերը զըրըմփալին էլ եղ ընկնում ա ֆորը:
Աղպեր, ըսօր ես մեռե, թե էգուց. ուշագնա ա ըլնում, մնում:

Նրանք էն սհաթը շադիրը հավաքում են, բեռները կապուտում,
ճամփա ընկնում դպա իրանց հոր քաղաքը: Ուզում են պումուր աղ-
պոր ձին էլ հենները քշեն, տանեն՝ ինչ անում են, չեն անում՝ չեն
կարում: Խեղճ հայվանը ֆորի էս զլիովն էր պտիտ գալի, էն գրլ-
խովն էր պտիտ գալի, դե՛ս վազում, դե՛ն վազում, խրխնջում,
ուզում էր իրան քցի ֆորը, տիրոնչ կուշտն էթա՛ տենում էր լիլ-
նում, ճար, իլլաջ շկա:

Գալիս են գալի, շատն ու քիչն աստոծ գիտա, մի շարաթ, էր-
կու շարաթ, իրեք շարաթ, անջախ որ հասնում են իրանց հոր քա-
զաքը: Զիանիքը քշում են դո՛ւզ թագավորի պալատի աղաքին վե
գալի, դուռը ծեծում: Նոքարը գալիս ա բաց անում:

¹ Տպագիր տեքստում բանահավաքի ձեռքով չնշված. է. Թողեսմ ենք, ինչ-
պես տպագիր տեքստում է (Ծ. Կ.):

- Ո՞ւմն եթ ուզում, — հարցնում ա:
- Թագավորի՛ն, — ասում են:
- Էթում ա իմաց տալի:
- Թագա՛վորն ապրած կենա, — ասում ա, — վեց մարդ, հեն-
ները օխտը սիրուն աղջիկ, քոշով, բարխանով էկել են պալատիդ
դռանը վեր էկե, ուզում են քեզ տենա: Թո՞ղամ գան, թե չէ:
- Թո՞ղ գան, — ասում ա թագավորը, — տենանը ի՞նչ մարդ են:
Նորարն էթում ա կանչում, բերում թագավորի կուշտը: Թագա-
վորը տենալու բաշտան ճանանչում ա, ընկնում տղերանց ճտովը,
պաշայորում, որախանում, աշխարով մին ըլնում:
- Ո՞րդիք, — ասում ա, — անշախ էկաք, աշքս ջուր դառավ
ձեր ճամփեն պահնելոն: Էս ո՞ւր եթ էսքամ վախտ:
- Դե ի՞նչ անենք, — ասում են, — էսքամ տարի մեռանք ման
գալուն. երկրե-երկիր, աշխարե-աշխար ման էկանք՝ անշախ գտանք:
Հըե՞ս օխտն էլ հալալ քվերտինք են՝ մի հորից, մի մորից. սավա-
յի է՞՝ օխտն էլ թագավորի աղջիկ:
- Է՞վ, — ասում ա թագավորը, — բա ձեր պումուր աղպե՞րն
ուր ա. ճամփին նրան ուստ չէկա՞ք:
- Զէ՛, թագավորն ապրած կենա, մենք պումուր աղպեր չենք
տեհեն:
- Ո՞նց է, ախա՛ր ձեր եննուցն էկավ: Հազար հետ ասեցինք.
«Մի՛ էթա, մի՛ էթա», անկաչ շարեց, ասեց. «Պտի էթամ, որ պտի
էթամ»: վե կացավ էկավ: Յարաք ի՞նչ էլավ, զուշ կերավ նրան,
զուրդ կերավ, զանավար կերավ, թե ընչանք հմի սաղ ա մնացե:
- Թե ի՞նչ ա էլե՞ շենք գիտա, — ասում են աղպրտինքը, —
համա մենք նրան աշքով էլ շենք տեհեն:
- Թագավորը շատ ա լաց ըլնում, զլխին վա՞յ տալի, համա էլ
ո՞ւր՝ բանը բանից անց էր կացե: Ինքը բեխարար, ինչ իմանա աղ-
պորտանց մոխաննաթությունը, հենց իմանում ա՝ զորթ են ասում,
բերում ա վեցին էլ պսակում, ամեն մեկին իրա նշանածը տալիս:
Մնում ա քոմմթից պումուր քիրը:

— Բա՛ զո՞ւ ումն ես ուզում, — հարցնում ա:

— Ըսկի մարդի էլա շեմ ուզում, թագա՛վորն ապրած կենա, —
ասում ա աղջիկը, — թե պումուր տղեղ սաղ-սալամաթ եղ էկավ:
Հո ես նրանն եմ, նա իմը. թե չէ՛ հո չէ՛, ես ովհտ եմ արե ընշանք
վերջը կուս մնամ, կուս էլ մննեմ գերեզման:

Ասենք սա աղպորտանց արարմունքը լավ գիտար, համա քաշ-
վում էր նրանցից, որ նստեր թագավորին մին-մին նազ աներ:

Սրանց թողանք ըստե, գանք խարար տանք պուճուր աղպորիցը:

Պուճուր աղպերը մի վախտ ուշբի ա գալի, աշբը բաց անում-
տենում ֆորումն ա: Ինչքամ ձեն ա տալի. «Աղպրտինք, աղպր-
տիք, աղպրտինք», լսող մինում:

«Ճե՛յ գիդի աշխարք,— ասում ա ինքն իրան,— աղպորն էլ
էտիրար շի մնացե: Նրանց ի՞նչքամ լավություն արի, ի՞նչքամ
փորձանքից պրծացրի՝ վերշը գլխիս էս օղիեն բերին: Է՛, բան շկա-
աստոծ ողորմած ա. Հալբաթ ինձ մի լիս ու ճար կանի, էրկու դռնից
մի դուռը բաց կանի, էս նեղ տեղիցը կազատի»:

Նրա Սև ձին էլ ֆորի դրաղին կաննած՝ վախտ-վախտ գրովաբ
կախ էր անում ֆորը, խրխնջում, ուքսոր-ուքուր լաց ըլնում: Զիռա
արտասունքները գըլգըւալեն էթում ին թափում տղի աշքերին, տղեն
էլ նրա հեննա ընդե էր լաց ըլնում:

— Զա՞ն, ա՞նլիզու հայվան ջա՞ն, ջա՞ն,— ձեն էր տալի տղեն
ֆորիցը,— դարդ մի՛ անի, ես դեռ հա սա՞ղ եմ, սա՞ղ:

Թամա՛մ օխտը պոլուիկ տարի պուճուր աղպերը մնաց ֆորու-
մը: Սև ձին ամեն օր էթում էր հանդը, ալապստրակից, յա զշից
զնչով կալնում, բերում քցում ֆորը, որ իրա տերն ուստի, սովածու-
թյունից շմեռնի:

Օրեն մի օրը, մի բեղրգյան գալիս ա էս ճամփովն անց կե-
նում: Գշերը որ վրա ա հասնում, էդ ֆորի կշտին վեր ա գալի, շա-
զիր տալի, մնում, որ առավոտը էլ եդ վե կենա էթա իրա ճամփեն:
Որ լիսը բացվում ա, տենում ա ֆորի դրաղին հրեն մի ձի, էթում
ա որ բռնի, փախնում ա:

— Յարար էդ ձին խի՞ էր ընդե պտիտ գալի,— միտք ա անում
ինքն իրան,— շըլնի՞ ֆորումը զադա տեհե, արի քար քցեմ տենամ:

Վեր ա ունում մի պուճուր քար, քցում ֆորը:

— Էդ ո՞վ եք,— ձեն ա տալի տղեն ֆորիցը:

— Հողածին ենք,— ասում ա բեղրգյանը,— բա դո՞ւ ով ես:

— Ես ֆլա՛ն թագավորի տղեն եմ:

— Բա ըտե ի՞նչ ես շինում:

— Է՛, հողածին, իմ դարդերը շատ ա, մի՛ հարցնի. ինձ մի
ըստիան հանա՛, հերիք ա:

Բեղրդյանը հրամայում ա նորարներին, պարանը կախ են տալի, տղին ֆորիցը հանում:

— Դու ասում ես՝ ֆլան թագավորի տղեն ե՞ս,— հարցնում ա:

— Հա՛, բեղրդյանը սաղ ըլնի, ֆլա՞ն թագավորի տղեն եմ:

— Չե՞ս գա քեզ տանեմ ինձ տղա շինեմ,— հարցնում ա բեղրդյանը,— հազիր ես էլ աղա չունեմ:

— Չէ՛, բեղրդյանը սաղ ըլնի, չե՞մ կարա. ես դեռ հլա մուրաղ ունեմ, պատի էթամ:

— Լա՛վ, դո՞ւ զիտաս, որ մուրաղ ունես՝ դնա՛. աստոծ քեզ հետ:

Բեղրդյանի հեննա մնաս բարով ա անում, նիլնում Աև ձին, էթում, էթում ա, էթում, շատն ու քիչն աստոծ զիտա, մի շայիր-շիման տեղ վեր ա գալի, որ մի քիչ դինշանա, էլ եղ վե կենա, էթա: Մի լավ դինշանում ա, հաց ուսում, վե կենում նիլնում ձին, որ էթա՝ թուրը դնիցը դուս ա գալի, ընկնում աղաթը.

— Ա՞յ հարա՛յ, — ասում ա, — բաս պատի դուշման գա աղաթա:

Էն սհաթը թուրը վեր ա ունում ձեռը՝ ընդե հազիր կաննում, դուշմանի ճամփեն պահում: Մի քիչ կենում ա կենում, տենում ա էն դհիցը մի դո՛վտ ա գալի, մի դո՛վտ ա գալի, մի դո՛վտ ա գալի՝ ոնց որ մի եքա սար:

— Հը՛, հողածին, — ձեն ա տալի, — օձն իրա պորտովը, դուշն իրա թեւվը ընշանք հմի իմ ահիցը չի կարացե ըստերանք ոտ դնի, դու ո՞նց ես սիրտ արե, էկե:

— Դո՛վտ աղպեր, — ասում ա տղեն, — էլ խի՞ ես պարծենում՝ աստոծ մի ֆոգի քեզ ա տվե, մի ֆոգի՝ ինձ. ուզո՞մ ես՝ արի մեյդան, կովենք:

— Լա՛վ, — ասում ա, — արի՞:

Էս ասում են թե չէ, հասնում են իրար: Կովում են, կովում են, կովում՝ ընշանք իրիկոմ կովում են, իրար արենճեճեխ, արենկուռ անում, նրանցից ոչ մինն էլա չի կարում զոռի:

— Թագա՞վորի ցեղ, — ասում ա դովտը, — ըսօր հե՛շ. արի էթանք իմ ամարաթը, ընդե քնենք, դինշանանք, առավոտը էլի գանք կովենք. հալբաթ աստոծ յա ինձ կտա, յա քեզ:

— Լա՛վ, — ասում ա, — է՛թանք:

— Էթում են ամարաթը՝ էդ գշերն ըտե քնում են, առավոտը առարք ծեքին էլ եղ գալիս կովում, Կովում են, կովում

ընշանքի իրիկուն կռվում են, իրար յարալու-փարալու անում, արեն-
լվիկ անում, թողում՝ էլի ոչ մինն էլա չի ախտում:

— Թագա'վորի ցեղ, — ասում ա զովտը, — արի ըսօր էլ էթանք
իմ ամարաթը՝ դինշանանք, առավոտը էլի գանք կովենք. էս հետ
որ աստոծ յա ինձ կտա, յա քեզ:

— Լա'վ, — ասում ա, — է'թանք:
էթում են: Գշերն ընդի քնում են, առավոտը լիսը բացվում ա
թե լէ՝ էլ եղ վե կենում, գալիս են, որ կովեն:

— Թագա'վորի ցեղ, — ասում ա զովտը, — էս չէլավ. ո'նչ ես
եմ քեզ ախտում, ո'նչ զու՝ ինձ: Արի՛ էս հետ էլ կոխ պրծնենք.
դու քու թուրը դեն քցա, ես էլ իմ զըրիւը: Ո'վ գենովը տվեց, նա
ախտել ա:

— Լա'վ, — ասում ա, — արի՛:
Կոխ են պրծնում: Զովտը որ չի վրա պրծնում տղին վեր ունում
գեննովը տալի՛ ընշանք զոտիկը խրվում ա գետինը: Հասնում ա,
որ շինքը թոցնի, ջանը մասն տղեն, ինչքամ ջանումը ջան կա, ո'ր
իրան չի թափ տալի՛ էլ եղ դուս ա գալի գեննիցը, վրա հասնում
կովտին. ո'ր չի վեր ունում իրա բոյովը մին տալի գեննովը՝ ըն-
շանք ծծերը գեննի միջին տնկվում ա: Վազում ա թուրը քերում, որ
գուխը թոցնի՝ զովտը էն սհաթը սիապտակ, կոկոմ ծծերը դուս ա
քցում: Տղի ձեռները թուզանում ա, թուրը վեր ընկնում ձեռիցը.
նոր տենում ա՝ ի'նչ զովտ... մի սի՞րում, ջանել-ջի՞վան աղջիկ-
էրում ա թեկցը բռնում, էլ եղ քաշում, գեննիցը հանում:

— Հո'ղածին, — հարցնում ա, — դու ա ղջիկ ես:

— Հա՛, թագա'վորի ցեղ, աղջիկ եմ:

— Ո'ւմ աղջիկն ես, ըստե ի'նչ ես շինում, — հարցնում ա:

— Ֆլա՛ն թագավորի, — ասում ա: — Հերնըմերս ուզում ին ինձ
մարդի տան՝ շուգեցի, ասեցի. Շնչանք ինձանից զոշաղ մարդ լու-
նի, շեմ առնիս: Թողի տո՛ւն, տե՛ղ, հե՛ր, մե՛ր էկա ըստե, զովտի
գեյմ մտա, ամարաթ շինեցի, միջին կացա: Ո'վ էս ճամփովն անց
էր կենում՝ թագավորի ցեղ, բեղրգյանի տղա, մախլա՛ս, հենց ո'վ
ըլնում էր՝ հեննեն կոխ ի պրծնում: ում գեննովն ի տալի՝ գուփսը
կտրում ի, քցում էն դիմը, էսքամ տարի ես ըստե եմ՝ ի'նչքամ թա-
գավորի ցեղ, ի'նչքամ բեղրգյանի տղա ա էկե, որ ըստիան անց
կենա, հեննեն կոխ եմ պրծե, զոռե՝ գլուխը թոցրե, թողե. համա-
ընշանք օրս, քեզանից սավայի դեռ իսանսառդի չի էլե, որ ինձ գեն-

նովլ տա: Հմի օր՝ խոսք չունեմ, դու իմ մարդն ես, ես քու կնիկը: Ռա՞զ զի ես:

— Զէ', — ասում ա,— ես նշանած ունեմ, որ օխտը սարի քամակին, զշեր-ցերեկ իմ ճամփեն ա պահում. պտի էթամ հավարին հասնեմ: Ուզում ես՝ ես կըլնեմ քեզ աղպեր, դու ինձ՝ քիր, դարբո՞ւլ ես:

— Հա՛, դրան էլ եմ դաբո՞ւլ, — ասում ա աղջիկը, — թող քու ասածն ըլնի՝ քիր ու աղպեր ըլնենք:

— Լա՛վ, ըլնենք, — ասում ա:

Թամամ օխտը պօլորիկ տարի տղեն էս աղջկա կշտին կացավ! Ասսու իրա օրը ձին նիլնում էր, էթում ավղուշ, իրիկունը դալի տուն, մըկ էլ տեհար քերեց կաֆավ, սարեկ, ես ինչ գիտամ՝ ծիտ, շորան-խարոնկ, լոր, ծառկուտուտ, տառակ, օրդակ, ձկընկովի. մախլաս¹, հենց ինչ ուստ էր գալի, էլ հալալ-հարամը չէր հարցնում, տալիս էր վե քցում, վեր ունում բերում. աղջիկն էլ դրանցից կերակուր էր շինում՝ ուստում ին, կշտանում, բերանները սրբում, դրադ կանենում², ասսուն փառք տալի:

Աղջիկը աղաքուց նրան դադաղա էր արե, որ ավղուշ էթալիս իրա սնուտիցը դուս շգա:

— Տե՛ս, — ասել էր, — իմ հանդը լեն-բոլ, ո՞ւր ուզում ես զնա՛, քեզ հմար ավ արա՞ ձեն, ծպտոն հանող շիլնի. համա խալխի հանդերը լրլնեմ-շիմանամ էթաս հա՞՝, թե չէ գլուխդ փորձանք կգա:

Նա էլ, թե. — Լա՛վ, որ ասում ես, շեմ էթա:

Օրեն մի օրը, էլի վեր ա կենում, էթում ավղուշ, ճամփին ինքն իրան միտք ա անում. ոՅարաք խի՞ պտի թագավորի աղջիկը ինձ դադաղա անի, թե իմ սնուտիցը գենը չէթաս, գլուխդ փորձանք կգա: Կա-շկա, ըստե մի բան կա. դու արի՞ մի փորձեմ, էթամ տենամ ինչ կա, որ ասում ա: Հը՞՝. էթամ՝ չէթամ, էթամ՝ չէթամ, էթամ՝ չէթամ։ Ըսենց մնում ա շիվարած, չի իմանում ինչ անի. էթա՝ վախում ա. չէթա՝ շիլնում, ուզում ա ո՞նց ըլնի, թեկուզ գլուխը մահի տա, իմանա:

Վերջը. «Ճհա՛նդամը գյոռ, — ասում ա, — մի օր էլել եմ, մի օր էլ պտի մեռնեմ, ի՞նչ ուզում ա ըլնի, պտի էթամ»:

^{1, 2} Տպագիր տեքստում բանահավաքի ձեռքով չնշված են. թողնում ենք, ինչպես տպագիր տեքստում է (Ս. 4.).

Էս ասում ա թե չէ, էրեսը խաչակնքում ա, ձիու զլովսը բաց թողում, տալիս սնուռն անց կենում: Էթում ա, ի՞նչ ա տենում լավ-լավ շայիր-շիման կանանց տեղեր, որ վրեն նստիլ, մի կտոր հաց ուստիլը հենց ինչ ասես աժի: լավ-լավ անմահական աղբրներ, որ հարիր տարեկան ժերը ընդիանց ջուր խմեր՝ կշահելանար, կդառնար տասնըհինդ տարեկան տղա: հազար մի ունգ ծաղկներ, որ նրանց անուշ ֆուրշ չեր դիպնում մարդի քթի՝ հենց իմանում էր դրախտումն ա, դշերն էլ հալ ու հեսար շկար: ամեն դից ո՞ր չին խոսում, ծըլվըլում՝ մարդի քեֆ ին բերում: Մախլա՛ս, պիսներդ ինչ ցավացնեմ, տղեն ըստերանք ո՞ր չի տենում բերանը մնում ա բաց:

«Օխա՛յ, — ասում ա, — ֆոդիս փառավորեց. էսթավուր դրախտում կենողն էլ յարար դա՞րդ կանի: լա՛վ, բա էն աղջիկը խի՝ չեր թողում գամ ըստերանք. հալբաթ ըստե մի բան կա, էթամ տենամ»:

Զին քշում ա մի քիչ դես ման գալի, դեն ման գալի, ըստե էթում, ընդէ էթում, իրա հմար ավ անում, մի քանի դուշ վի քշում, հավեսը հանում. հենց էն ա ուզում էր էլի եդ գառնա գա իրանց սնուրը, թուրը էն սհաթը զնիցը դուս ա գալի, ընկնում աղաքը:
«Ա՛յ հարա՛յ, — ասում ա, — բաս պտի դուշման գա աղաք. ես վախտով իմ պիսի ճարը տենամ»:

Թուրը վեր ա ունում, հազիր կանում, դուշմանի ճամփեն պահում, կենում ա կենում, մի սհաթ, էրկու սհաթ, իրեք սհաթ, տենում ա, ըհը՛, հրեն ընդիան մի կոլոտիկ, կարճ մարդ դուս էկավ:

— Հո՛ղածին, — գոռաց, — դո՞ւ ըստերանք: Օձն իրա պորտովը, զուշն իրա թևովը ընշանք օրս իմ ահիցը սիրտ չի արե ըստերանք ոտ կոխի, դու ո՞նց ես սիրտ արե, էկե. ո՞նց ես մենք թիքեն անկազդ թողամ:

— Լա՛վ, — ասեց տղեն, — էլ խի՝ ես զուգուզանում. աստոծ մի ֆոդի քեզ ա տվե, մի ֆոդի ինձ: Ուզո՞ւմ ես արի կովենք, տենանք որս ա զոշաղ, ե՞ս, թե դու Ղա՞րուկ ես:

— Ղա՞րուկ եմ, — ասեց, — արի:

Էս ասում են թե չէ, հասնում են իրար:

— Յա՛ սուրբ Կարապիտ, — ձեն ա տալի տղեն, թուրը վրա բերում:

Վրա բերելու բաշտան որ չի դիպնում նրա ջանին՝ հազար տեղան կրակ ու բոց ա դուս գալի, քիչ ա մնում տղին էրի, փոթոթի,

քուլ շինի: և եղան մնում ա շիվարած: ոչս ի՞նչ թավուր խօսն ա,—
ասում ա ինքն իրան,—որ ջանիցը կրակ ա դուս գալի. կաց մի հետ
էլ տամ, տենամք:

Թուրք բաշում ա, մին էլ ա տալի, տենում ա էլի կրակ դուս
էկավ: Մի՛ն, է՛րկու, հի՛նդ, տա՛սը, քսա՛ն, մախլա՛ս՝ քանի տվեց,
կրակ դուս էկավ նրանից:

Վերջը էն կարճիկ մարդը տեհավ, որ շատ ա շարչարվում,
ասեց.—Տղա՛, բո՛ւ չի տաս, խի՞ ես զուր տեղը շարչարվում. յա-
րար դի՛տաս ե՛ս ով եմ:

— Ո՞վ ես,—հարցրեց:

— Ե՞ս, ը՞ն՛, ես Զան-Փոլատն եմ,—ասեց,—որ արար աշ-
խարքը իմ ձեռիցը զվիր ա էկե: Ըսկի բա շե՞ս լսե անումս: Ընշանք
օրս գեռ ադամառողի սիրտ չի արե իմ սնուռը ոտ կոխի, քեղանից
սավայի, որ գլխիցդ ձեռ եռ վե կալե, էկե ինձ կիրակուր: Իմ շանը
որ կա, սադ փոլատից ա, թուր, թվանք, յարաղ-ասպար, որ ասես,
քյար չի անի: Հո տված, շտված՝ մին ա:

Տղեն էս որ լսեց, վախլությունից քիչ մնաց լեղին պատոի:
Ճարը կտրած, նո՞ր օձի նման լիզու հանեց, ընկավ՝ աղալանք, պա-
ղատանք:

— Ամա՞ն, գիտաս,—ասեց,—Զա՞ն-Փոլատ, քու ոտն եմ ըն-
կե: Ժեղք եմ, զահել-շիվան եմ, թո՛ղ էթամ իմ արևի ձեռն ածեմ:

— Լա՞վ, որ թողամ, դո՞ւ ինձ ինչ լավություն կանես:

— Սրտիդ ինչ մուրազ ունես,—ասեց,—ասա՛, էթամ, գլուխս
մահի տամ, կատարեմ: սրանից էլ լավ բա՞ն:

— Է՛, տղա՛, սադ աշխարքը որ իմ ձեռին դողում ա՝ ըսկի ես
չկարացի սրտիս մուրազը կատարի, դո՞ւ պտի կարենաս, թահո՞ւ

— Հա՛, ես կարամ, կարացի՝ կարացի, չկարացի՝ արինս քեզ
հալալ ա:

— Դո՞րթ:

— Դո՞րթ:

— Լա՞վ, կասեմ: Պտի էթաս Զինումաշինա քաղաքի թագավո-
րի աղջիկը բերես, կա՞րաս:

— Կա՞րամ. չկարացի՝ արինս քեզ հալալ:

— Լա՞վ, զնա՞—ասեց Զան-Փոլատը,—էդ աղջիկը բերիր՝ հո
մուրախաս ես, կթողամ կէթաս, թե չէ հո՞ իմաց կաց քեզ էլ պըրծ-
նում չկա: Ղա՞րու ես:

— Ղա՛րու եմ,— ասեց: — Մնաս բա՛րին:

— Գնաս բա՛րին, աստոծ բարի ճամփաւատա:

Տղին ա՝ էն սհաթը ոտք դնում ա օրվանգում, թոնում Աև ձին, ասսու անումը տալի, ընկնում ճամփա՝ դպա Զինումաշինա քառաբը էթում ա, էթում ա, շատն ու քիշն աստոծ զիտա, մի՛ օր, է՛րկու օր, ի՛րեք օր, բիրդան ճամփի վրեն տենում ա հրեն մի փուշ, միջին մի սիրուն, նա՛շխուն աղունիկ խրվել ա, չի կարում թոնի:

Զիու վրիցը ձեռը մեկնում ա, որ բռնի մորթի, էլ դմիշը չի գալի, ասում ա. «Մե՛ղք ա, հալքաթ ճուտեր կունենա, բաց թողամ էթա»:

— Աղա՛տ, աղա՛տ, քու ասսուն ազատ, — ասում ա ու բաց թողում:

Աղունիկը ուրախ-ուրախ թոնում ա էթում: Մի քիշ տեղ թոնում ա թոնում էլ եղ գալի կաննում տղի գլխին.

— Թագա՛վորի ցեղ, — ասում ա, — դու ինձ ընենց մի լավություն արիր, որ չեմ զիտա ո՛նց տակիցը դուս զամ: Իմ բմբլիցը հրես մի հատ կտամ քեղ, — ասում ա, — կշտիդ պահա՛. նեղն ընկած վախտը կրակին տաս թե չէ՝ էն սհաթը քու հավարին կհասնեմ:

Աղունիկն էս ասում ա թե չէ՝ թոնում ա, վրիցը կտցով մի բմբուկ պոկում, քցում գետինը:

Նա էլ վեր ա ունում պահում. ասում ա. «Մարդ ա, բալի պետքն ա գալի»: Բմբուկը դնում ա ծոցը, էլ եղ վե կենում էթում: էթում ա, էթում ա, էթում ա՝ մի՛ ամիս, է՛րկու ամիս, ի՛րեք ամիս՝ անջախ որ հասնում ա Զինումաշինա քաղաքը: էթում ա դուզ թագավորի խնամաքարի վրեն նստում:

Թագավորի աղջիկը իրա օթախիցը թամաշ ա անում, տենում մի սիրուն, բոյ ու բուսաթով տղա հրե խնամաքարի վրեն նստած:

Ղարավաշին դրկում ա, ասում ա. — Գնա՛ էն տղին կանչա՝ գա փանչարիս¹ աղաքը:

Ղարավաշն էթում ա. կանչում, բերում:

— Ի՞նչ մարդ ես, — հարցնում ա աղջիկը, — ի՞նչ բանի հմար ես էկե:

— Ֆլա՛ն թագավորի տղեն եմ, — ասում ա, — էկել եմ Զինումաշինի թագավորի աղջիկը տանեմ:

¹ Տպագիր տեքստում՝ ակուշին, ուղղումը բանահավաքինն է (Ա. Կ.):

— Թու ուզած աղջիկը հենց ե՞ս եմ, — ասում ա, — լա՛վ թամաշ արա՛, տես կհավա՞նես:

Գլուխը որ չի բանձրացնում մտիկ տալի, ի՞նչ ա տենում՝ մի ա՛ղջիկ, մի ա՛ղջիկ, մի ա՛ղջիկ, էնքա՛մ սիրուն, էնքա՛մ նաշխուն, որ շուտես, շխմես, շհագնես, շմաշես՝ հենց նրա գյուղ-ջամալին թամաշ անես. մի խոսքով՝ արեգակի կտոր, մի՛ հրեշտակ, մի՛ մարալ, մի՛ շեյրան, մի՛ հուրի-մալաթի մեկը, որ արևին ասում ա՛ դու մեր մտի, ես դու եմ գալի, էնքա՛մ սիրուն էր¹:

Նրան ո՛ր չի տենում՝ ջանը մահման դող ա ընկնում, սրսըռթում, լիզոմ կապնվում, էլ չի կարում խոսս՝ հենց խելթամաղ ա ըլնում, մնում:

— Հը՛, տղա՛, — մըկ էլ հարցնում ա աղջիկը, — ինձ հա՞վան կացար, թե չէ՛:

— Թագավորի աղջիկը սաղ ըլնի, քեզ աստոծ ա հավանե, ես կա՞րամ շհավանի:

— Լա՛վ, — ասում ա, — որ էկել ես ինձ տանի՝ հերս քեզ իրեք բան կասի՛ կա՞նեսու:

— Ի՞նչ իրեք բան, — հարցնում ա տղեն:

— Մի՛ն որ, — ասում ա, — փետե կացինը պտի վեր ունես, տաս, էրկաթե սինը կտրես. կա՞րաս:

— Թագավորի աղջիկը սաղ ըլնի, ըտենց բան կըլնի², փետե կացնով էրկաթե սին կկտրվի³:

— Էդ հո էդ: Պտի մի տոլու լիքը գինի գնես ծոցդ, նիլնես մեր էրկեն բարդու գլուխը՝ էլի վե գաս, ընենց որ գինուցը մի պուտ էլա շթափի. կա՞րաս:

— Զէ՛, — ասում ա, — թագավորի աղջիկը սաղ ըլնի, չէ՛, շեմ կարա:

— Բտ էլ հո էդ: Վրա իրեքն էլ՝ պտի իրեք օրավար տեղ կորեկ ցանեն, եննա փողիսեն, որ խառնվի ֆողի հեննա: Մի օրումը պտի էդ կորեկը քոմմա հավաքես, որ մի հատ էլա շմնա, կարա՞ս:

— Զէ՛, թագավորի աղջիկը սաղ ըլնի, էդ էլ շեմ կարա. բաս ասա հերդ պտի ինձ քրալլա անի, է՞լի:

— Զէ՛, տղա՛, — սիրտ ա տալի աղջիկը, — քանի ջանումս ջան կա՝ շեմ թողա որ քու մի մազն էլա թեքվի: էդ իրեքից էրկսի հունարը ես գիտամ, կսովրացնեմ, կէթաս կանես՝ կպրծնես. համա էն

¹ Տպագիր տեքստում՝ «...էնթա՛մ մի սիրունիկ զաղ էր». ուղղումը բանահավաքինն է (Ա. Կ.):

որ պտի իրեք օրավար տեղ կորեկ ցանեն, հավաքես՝ էդ չեմ գիտա-
սուս ասեմ՝ ի՞նչ:

— Բա՛ն չկա, — ասում ա տղեն, — դեռ մի էն էրկուսն ասա՛
տենամ՝ ո՞նց պտի անեմ, էդ մինն էլ աստոծ ողորմած ա, հալբաթ
հավարիս կհասնի:

— Ա՛յ ոնց պտի անես: Ա՛ռ հրես Մարիամ աստոծածնա աղ-
լուխը: որ կէթաս թագավորի կուշտը, կասի՛ փետե կացինը վե կալ
էրկաթե սինը կտրա. կտանես էս աղլուխը կըցես սան վրեն, կա-
ցինը վե կունես, կասես. «Ո՛վ սուրբ Մարիամ աստոծածին, քեզ
եմ ապավինեն»: Կասես ու կտաս. տալու բաշտան էրկաթե սինը էր-
կու կըլնի, ընդե վե կընկնի: Էս ըսենց կանես: Ըս էլ Մարիամ աս-
տոծածնա մատանիքն ա, ա՛ռ կշտիդ պահա. թագավորը տոլուն
որ կլցնի, կտա քեզ, կասի. «Սոցգ զիր, նիլ բարդու զլուխը», էս
մատանիքը մի ֆանդով քցա մեջը, եննա նի՛ւ, մի՛ վախի, նիլնես,
վե գաս՝ մի պուտ էլա շի թափի: Հրե՛ս, էն էրկու բանի հունարն
էս ա. ոնց որ ասեցի, ընենց էլ կանես: Բա՛ էն մեկե՞լը:

— Էն մեկելն էլ ումուդ աստոծ, հալբաթ մի բան կանեմ, —
ասում ա տղեն, — էթում էլ եդ թագավորի խնամաքարի վրա նըս-
տում:

Թագավորը դուա ա գալի, տենում մի սի՛րուն, նա՛շխուն, բո-
յով-բուսաթով տղա հրեն խնամաքարի վրեն նստած:

— Հը՛, տղա՛, — ասում ա, — ի՞նչ խնդիրը ունես:

— Սա՛ղությունդ, թագավորն ապրած կենա, էկել եմ աղջր-
կանդ տանեմ:

— Լա՛վ, որ էկել ես տանես, իրեք բան պտի ասեմ, կա՛րաս
անի:

— Խի՛ չեմ կարա, թագա՛վորն ապրած կենա. շկարացի՛ արի-
նըս քեզ հալալ ա:

— Լա՛վ, որ կարաս՝ արի՛, մեղքն ու վարձքը քու շլինքը:

Կռնիցը բռնում ա, տանում էրկաթե սան կշտին կաննացնում,
փետե կացինը տալի ձեռը:

— Ա՛ռ, — ասում ա, — էս փետե կացնովը պտի տաս, էս էր-
կաթե սինը կտրես. մինն էս ա, դե արա՛ տենամ:

— Աշքիս վրեն, — ասում ա տղեն, — կանեմ:

Էն սհաթը ծոցիցը հանում ա Մարիամ աստոծածնա աղլուխը,
քցում սան վրեն:

— Ո՞վ սուրբ Մարիամ աստոծածին,— ասում ա, — քեզ եմ
ապավինեն:

Ասում առ տալի: Տալու բաշտան սինը միջիցը կես ա ըլնում,
ընդի վեր ընկնում:

— Հը՛, կարա՞ցի, թե չէ, թագավորն ապրած կենա, — ձեն ա
տալի:

— Ա՞ֆարիմ, էս մինը կարացիր. մնաց էրկուսը: Հմի մի տո-
լու դինի պըռտեպունգ լիքը, պտի դնես ծոցդ, նիլնես մեր բարդու
գլուխը, վե դաս՝ որ մի պուտ էլ ա լթափի. կա՞րաս:

— Կա՞րամ, խի՞ չեմ կարա, — ասում ա:

Թագավորն. էթում ա մի տոլու լիքը գինի լցնում, բերում տա-
լի տղին, տանում բարդու կուշտը:

— Դե ա՛ռ, — ասում ա, — դի՞ր ծոցդ, նի՞լ տենամ:

Տղեն էն սհաթը Մարիամ աստոծածնա մատանիքը հանում ա,
քցում տոլուն, դնում ծոցը՝ նիլնում, վե դալի, որ ասես մի պուտ
էլ ա չի թափում:

Թագավորը, նրա նազիր-վեպիրը քոմմքով մնում են մաթ էլած
տղի վրեն, թե էս ի՞նչ իսան ա, ի՞նչքամ հունար ունի, որ ըս էլ
էրկու հետ թագավորի ասածն արեց, չունքի քա'նի-քա'նի մենծ-
մենծ մարդիկ՝ է՛լ թագավորի տղա, է՛լ նազրի տղա, է՛լ վեզրի
տղա, ես ինչ գիտամ՝ բեղրգյանի տղա, մախլա՛ս էլ ով ասես էկել
էր, չէր կարացե էդ իրեքից մինն էլա անի. թագավորը քոմմքի
գլուխն էլ կտրիլ էր տվե, թողե:

— Դե գնացե՛ք, — ասեց թագավորը իրա նոքարներին, — իրեք
օրավար տեղ վարեք, կորեկ ցանեք, լավ փոցխեք, թող էս տղեն
մին-մին հավաքի: Հավաքեց՝ հավաքեց, աղջիկս մոր կաթի նման
հալալ ա սրան. թե չէ հո սրա արինն ա ինձ հալալ: Տղա՛, ուա՞զի ես:

— Ռա՞զի եմ, — ասում ա:

Նոքարներն էթում են իրեք օրավար տեղ վարում, ցանում,
լավ-լազաթին փոցխում, թողում գալի, որ տղեն հավաքի:

Տղեն հավաքեց: Հավաքեց, հավաքեց, հավաքեց, ընշանք ճաշ
հավաքեց՝ դեռ հլա հարիր կորեկ անշախ էր հավաքի: Բերնով ասի-
ւը հեշտա, ախար իրեք օրավարեն տեղ կորեկ, ըն էլ մի օրումը
հավաքել կըլնի:

— Բանս բուրդ ա, — ասեց ինքն իրան, — էս հետ որ թագավո-
րը ինձ քյալլա կանի:

Մնացել էր խեղճը գլխի վրեն մոլորած, չէր իմանում ինչ անի.
մեկ էլ¹ աղունկի բմբուկը միտն ընկավ:

«Սրանից էլ նեղ՝ տեղ,— ասեց,— արի՛ մի փորձեմ էս բըմ-
բուկը կրակ տամ, տենամ. բալի հավարիս հասնում ա»:

Էն սհաթը հանում ա կրակ տալի: Կենում ա մի սհաթ, էրկու
սհաթ, իրեք սհաթ՝ տենում ա էկավ, աղո՞միկ էկավ, աղո՞միկ
էկավ, աղո՞միկ էկավ, ոնց որ մի սելավ. սաղ կորկի արտը աղուն-
կով լցվեց, որ ասեղ քցեիր՝ գետինը շէր ընկնի՝ էնքամ լցվել էր:
է՛, էսքամ աղունկին էլ կո՞րեկ կդիմանար: Կես սհաթումը քոմմա
հավաքեցին, զրադին կիտեցին, էլ եղ թռան, զնացին: Տղեն ուրա-
խացավ, աշխարով մին էլավ:

«Զա՞ն,— ասեց,— էս հետ էլ պրծա, հմի որ թագավորի աղ-
ջիկը տարա»:

Իրիկունը նոքարներն էկան տենան տղեն ինչ հալի ա, հա-
վաքե՞լ ա, թե չէ: Տեհան քոմմա հավաքել, է՛, եքա ամբար ա արե,
արտի կողքին կիտե: Խարարը տարան թագավորին:

— Թագավորն ապրած կենա, — ասեցին, — էն տղեն իրեք օրա-
վար կորեկը քոմմա հավաքել ա, պրծե. որ ասես մի հատ էլ չի
թողե՛:

— Դնացե՞ք, կանչեք գա, — ասեց:

Դնացին կանչեցին, բերին:

— Տղա՛, — ասեց թագավորը, — դու իմ ուզած իրեք բանն էլ
արիր. հմի էլ խոսք չունեմ. աղջիկս քեզ մորդ կաթի նման հալալ
ա, տա՛ր: Համա մի բան էլ որ ասեմ, անկազ կա՞նես, — հարցրեց:

— Ասա՛, թագա՛վորն ապրած կենա, խելքս կկտրի, անկազ
կանեմ, թե չէ՛, հո չէ:

— Տղա՛, — ասեց, — ես քեզ շատ սիրեցի, ուզում եմ որ ըս-
տիան էլ չէթառ. չե՞ս գա քեզ ինձ տղա շինեմ:

— Չէ՛, թագա՛վորն ապրած կենա, չեմ կարա. ես դեռ հլա մու-
րաղ ունեմ, պտի էթամ:

Շատ զուեց որ կենա, տղեն չկացավ, ասեց. — Պտի էթամ, որ
պտի էթամ:

— Լա՛վ, որ մուրազ ունես, զնա՛, աստոծ քեզ հետ:

¹ Տպագիր տեքստում՝ դաֆիլ տեղը, ուզզումը բանահավաքին է (Ս. 4.):

Բերեց աղջկա հեննա լավ բաժինք դրեց, լավ մալ ու դոլվա-թով, լավ-լավ կեշքաշներով ճամփու դրեց:

— Գնացի՞ք, ո՞րդիիք, — ասեց, — աստոծ էրկսիդ մի բարձի ծեռացնի, ծլե՞ք, ծա՛ղկեք, ճղքնդքնոտեք. առջնեկներդ տղա ըլնի:

Խեղճ թագավորը հենց գիտար աղջկանը իրա հմար ա տանում. շէր գիտա, որ Զան-Փոլատի հմար ա:

Տղա, աղջիկ գնացին թագավորի ձեռը պաշեցին, էկան բեռները բարձեցին, ընկան ճամփու:

Գնացին, գնացին, շատն ու քիչն աստոծ գիտա, գշերը մի տեղ վեր էկան, շաղիր տվին, կացան: Մի քիչ հաց-մաց կերան, բերին տեղները քցեցին, որ քնեն: Տղեն էն սհաթը թուրը հանեց, դրեց արանքները:

— Էլ թո՞ւրն ինչ ա, — հարցրեց աղջիկը, — չէ՞ մենք մարդ ու կնիկ ենք:

— Չէ՛, — ասեց, — մենք մարդ ու կնիկ չենք, քիր-աղպեր ենք:

— Ո՞նց թե քիր-աղպեր. բա ես քու կնիկը չե՞մ:

— Չէ՛:

— Բա ո՞ւմ:

— Զան-Փոլատի: Քեզ նրա հմար եմ տանում:

— Պա՞հ քու տոմը հրեղեն սուր մննի, — ասեց աղջիկը, — ինձ տանում ես էն արենխում ջանավարի ձեռը քցես, ֆողեց-ֆողի կորցնե՞ս:

— Չէ՛, թագավորի աղջիկ, դարդ մի անի. մի գլուխ ումեմ՝ քեզ զուրբան կանեմ, Զան-Փոլատի ձեռիցը կպրժացնեմ. համա հմի որ խոսք եմ տվե, չեմ կարա, պտի տանեմ:

— Դու քու աստոծը, — ասեց աղջիկը, — ես որ ոտով-զլխով քուն եմ, ի՞նչ կուզես, արա՛:

— Մի՛ վախի, — ասեց, — խոսքը խոսք ա:

Առավոտը որ լիսը բացվեց, ըստիան վե կացան, շաղիրը հավաքեցին, էլ եդ գնացին իրանց ճամփեն: Գնացին, գնացին, շատն ու քիչն աստոծ գիտա, գշեր-ցերեկ գնացին, մի ամիս, էրկու ամիս, իրեք ամիս՝ հասան Զան-Փոլատի ամարաթը: Զան-Փոլատը հեռվանց աղջկանը որ տեհավ՝ ուրախացավ, աշխարով՝ մին էլավ: Վազեվազ էկավ աղաքները:

— Ա՛ֆարիմ, տղա, — ասեց, — Զինումաշինա թագավորի աղջիկը որ բերիր, հմի մուրախաս ես. գնա՛ արկիդ ձենն ածա:

Աղջիկը տալիս ա Զան-Փոլատին, հեննեն մնաս բարով անում, ձիու գլուխը բաց թողում, էթում: էթում ա, էթում, շատն ու քիչն աստոծ գիտա, մի սհաթվա, էրկու սհաթվա, իրեք սհաթվա ճամփա էթում ա, էլ եղ դառնում:

— Խոսքը խոսք ա,— ասում ա,— պտի էթամ:

Գալիս ա Զան-Փոլատի ամարաթի կշտին մի տեղ տափ կենում: Որ լավ մութը գետինը կոխում ա, Զան-Փոլատը գալիս հաց ուսում, մննում տեղը, խըզմփալեն շնթոկում՝ տղեն ուսուզով ամարաթի դուռը բաց ա անում, մննում նեքսեն, աղջկա զլսավերեն կան-նում: Նրան էլ աղաքուց ասել էր հազիր կենա, որ էդ զշեր պտի գա փախցնի, տանի:

— Հը՛, — ասում ա, — էթա՞նք, թե չէ:

— Էթա՞նք, — ասում ա:

Աղջկանը դուս ա բերում, քաշում ձիու թարքը՝ յա՞լա:

Թող նա էթա, գանք խարար տանք Զան-Փոլատիցը: Առավու- տը վեր ա կենում, տենում աղջիկ շկա:

— Կա շկա, — ասում ա, — էն քյաֆուր տղեն ա փախցրե:

Էլ մաշալ չի տալի, թոնում ա ձին, ընկնում եննուցը: Քշում ա, քշում ա, ո՞նց ա քշում, ո՞նց ա քշում, որ էրկու սհաթվա ճամ- փեն մի սհաթումն ա էթում: էթում ա, էթում, ճամփի կիսին տղին հասնում ա, աղջիկը ձեռիցը խլում:

— Հը՛, տղա՛, — ասում ա, — ո՞նց ես մենծ թիքեն անկազդ թողամ:

— Ամա՞ն գիտաս, Զան-Փոլատ, — ասում ա տղեն, — քու ոտն եմ ընկե, էս հետ բաշխա՛, էլ շեմ անի:

— Կա՞վ, — ասում ա, — էս հետ բաշխում եմ, չոմքի դու շըլու նեիր՝ հազար տարի ճգնեի, Զինումաշինա թագավորի աղջիկը շէի կարա բերի: Դնա՛, տղա, գնա՛. դեռ ջահել-ջիվան ես, գնա արեկի ձենն ածա՛:

Եդ ա զառնում, գալի:

Համա տղեն ո՞նց կարար կաշվումը սթրի, չոմքի մի հետ աղ- ջրկանը խոսք էր տվե: Մի քիչ կենում ա, էլի ձիու գլուխը շուռ ա- տալի, գալի Զան-Փոլատի ամարաթը:

— Խոսքը խոսք ա, — ասում ա, — պտի էթամ:

Հտերանք մի տեղ տափ ա կենում, ընշանք լավ մթնում ա,

Զան-Փոլատը ավից գալիս ա, հաց ուտում, շնթոկում՝ ուսուզով ամարաթի դուռը բաց ա անում, մննում նեքսե, էթում աղջկա գըլ-խավիրներ կաննում:

— Հը՛, — ասում ա, — էթա՞նք, թե չէ:
— էթա՞նք, — ասում ա:

Աղջկանը դուս ա բերում, ձին դաթի ամարաթի դուանը կապած՝ նիլնում, նրան էլ քաշում թարթը՝ յա՞լլա:

Թո՞ղ նա էթա, գա՞նք Զան-Փոլատիցը խարար տանք: Առավու-տը որ լիսը բացվում ա, վեր ա կենում տենում էլի աղջիկ չկա:
Դե՞ս աղջիկ, դե՞ն աղջիկ՝ չկա, որ չկա:

— Կա չկա, — ասում ա, — էլի էն քաֆուր տղեն ա փախցրե:
Էն սհաթը նիլնում ա ձին, ընկնում եննուցը: Տղեն հենց էն ա՝ քիշ էր մնացե սնուտն անց կենար, եղկիցը հասնում ա, աղջիկը ձե-սիցը խլում:

— Հը՛, տղա, — ասում ա, — է՞ս հետ ոնց ես. մենք թիքեն ան-կաշդ թողա՞մ, թե չէ՛:

— Ամա՞ն, ասսու սիրուն, Զան-Փոլատ, — ասում ա, — քու ոտն եմ ընկե, մե՞ղա, ես արեցի՝ դու մի անի. շահել-շիվան եմ, թող էթամ մուրազիս հասնեմ:

— Լա՞վ, — ասում ա Զան-Փոլատը, — գնա՛, էս հետ էլ եմ բաշ-խում, գնա՛ մուրազիդ հասի:

Եդ ա դառնում, գալի:

Համա բե, որ տղեն էլի դինջ չի մնո՞ւմ:

«Զըհա՞նդամ, — ասում ա, — ի՞նչ ուզում ա ըլնի, խոսքը խոսք ա՝ պտի էթամ»:

Զիու գլուխը ծոռում ա՛ղպա Զան-Փոլատի ամարաթը: Էլի ըտե-րանք մի տեղ տափ ա կենում, ընշանք մութը գետինը կոխում ա, Զան-Փոլատը ավից եդ ա գալի, շնթոկում՝ ուսուզով ամարաթի դու-ռը բաց ա անում, մննում նեքսե, էթում աղջկանը զարթացնում:

— Ա՛ղի, — ասում ա, — բա ո՞նց անենք. ըս էլ էրկու հետ ուզեցա քեզ փախցնեմ՝ չէլավ, Զան-Փոլատի ձեռիցը չպրծա, իմա-ցավ, էկավ եղեկցս հասավ: Վրա իրեքն էլ որ բռնել ա՝ իմաց կաց էրկսիս էլ բանֆոփի կանի, մեր մենք թիքեն անկաշը կթողա: Արի՛ դու էլի բալքի մի ֆանդով հարցնես, իմանաս նրա ֆողին ո՞րդի ա. թե չէ ըսենցով բան չի դառնա. դրան էլ սըպանելու ճար, իլ-լաջ չկա:

— Ո՞նց հարցնեմ; — ասում ա աղջիկը:

— Ա'յ ոնց. էգուց իրիկոմը որ նա ավիցը կգա, դու դառը-
տխուր, նոթերդ կիտած տանը նստի. որ կհարցնի՝ իսի՞ ես ըտենց,
ասա. «Բա՛ ինչ անեմ, դու էթում ես քեզ հմար սեհրն անում, ինձ
թողում բուրուի նման տանը նստած»: Որ կասի. «Բա ո՞նց անեմ,
որ մենակ շըլնես», ասա. «Քու ֆոգին ո՞րդի ա, տեղն ասա, էթամ
բերեմ, գնեմ կողքս, հեննեն խոսամ, զրից անեմ. էն վախտը ոնչ
մենակ կըլնեմ, ոնչ էլ»: Քանի նա շեմ ու շում կանի՝ դու հենց էրե-
սիցը կամ իլ, հա՛ ասա, ընշանք դահլին տանես: Իմացա՞ր:

— Իմացա, — ասում ա, — դե բաս դու գնա, քանի Զան-Փոլա-
տը շի վե կացե, թե չէ մաշներս կտա:

Տղեն դուռ ա գալի, էլի ըտերանք մի տեղ տափ կենում: Իրի-
կոմը Զան-Փոլատը ավից գալիս ա տուն, տենում աղջիկը դառը-
տխուր, նոթերը կիտած նստել ա, որ ասես շի խոսում:

— Հը՛, ի՞նչ ա էլե, — հարցնում ա, — իսի՞ ես ոմքերդ վե թո-
ղե. շըլնի՞ քեզ շունես:

— Բա՛ ինչ անեմ, — ասում ա, — դու քեզ հմար էթում ես ման
գալի, սեհրն անում, ինձ թողում ըստե սաղ օրը մեն-մենակ: Ոնչ
մարդ կա, ոնչ մադաթ, որ հեննես զրից էլա անի. բուրուի նման
մնում եմ նստած. հա թամաշ արա, թե պտի իրիկոմը գաս:

— Բա՛ ոնց անեմ, ա'յ կնիկ. ես էլ որ ավի չէթամ, ի՞նչ պտի
ուտենք. սոված հո շե՞նք կոտորվի:

— Ա'յ ոնց արա, — ասում ա աղջիկը, — ասսու իրան օրը, ավի
էթալիս՝ ֆոգիդ թող ըստե, հեննեն զրից անեմ, մենակ շմնամ:

— Լա՛վ, — ասում ա, — իմ ֆոգին հրես էս ավլի միջին ա, որ
ըստիան դուս կէթամ, բե դի կողքդ, ինչքամ ուզում ես հեննեն խո-
սա, որ մենակություն շքաշես:

— Լա՛վ, — ըստենց կանեմ:

Էդ գշերն ըտենց անց ա կենում: Առավոտը լիսը բացվում ա թե
շէ, Զան-Փոլատը վեր ա կենում, էթում ավղուց: Աղջիկն էն սհաթն
էթում ա ավլիլը բերում, մարդի շորերը նրան հագցնում, դնում
կողքը, որ հեննեն զրից անի: Ինչ խոսում ա՛ ձեն շի հանում, ինչ
խոսում ա՛ ձեն շի հանում:

«Էս ի՞նչ թավուր ֆոգի ա, — ասում ա, — որ ոնչ խոսում ա, ոնչ
էլ. էն յաղին նա ինձ խարեց»:

Իրիկումը Զան-Փոլատը եղ ա գալի, տենում ավլին հագցրել
ա իրա շորերը, դրե կողքը, հեննեն զրից անում:

— Ա'յ անխելք կնիկ, — ասում ա, — ավլի միջին ֆոդի կըլնի.
ըսկի ավատալու բա՛ն ա:

— Բա ո՞րդի ա, — հարցնում ա:

— Ա'յ էս կժի միջին, — ասում ա, — բե՛ զի կողքդ, ինչքամ
ուզում ես հեննեն խոսա:

— Լա՛վ, ըտենց կանեմ:

Եղ գշերն էլ ա ըտենց անց կենում: Առավոտը լիսը բացվում ա,
Զան-Փոլատը վեր ա կենում, էթում ավղուշ: Աղջիկն էն սհաթն
էթում ա կուժը բերում, մարդի շորերը լավ-լազարին հագցնում
նրան, զնում կողքը: Համա ինչ անում ա, շի անում՝ շի խոսում.
մնում ա արմացած:

— Յաղին, էն քյափուրն էս հետ էլ խարեց. նրա ֆոդին էս կժի
միջին էլ շի, ուրիշ տեղ ա:

Զան-Փոլատը իրիկումը ամիցը գալիս ա տենում՝ իրա շորերը
հագցրել ա կժին, լավ սիրունիկ զուգե, զարդարե, դրե կողքը, հեն-
նեն խոսում:

— Ա'յ անխելք կնիկ, — ասում ա, — էդ ինչ ես անում. ես ասե-
ցի, զու էլ ավատացիր. կժի միջին ֆո՞զի կըլնի:

— Բա ո՞րդի ա, — հարցնում ա, — զի զուստն ասա՛, տե՛նամ:

— Դրուստը կասեմ, — ասում ա, — համա իսանառդի շի կա-
րա էթա ընդեւ:

— Բան չկա, զու ասա՛, բերիլ տալը իմ շլնքին:

— Բաս ըտենց ա, կասեմ: Իմ ֆոդին հրե հա՛ ֆլան մեշումը,
ֆլան ասլանի փորին. ըն էլ ի՛նչ՝ իրեք ծիտ ա, մի զութիկի միշի
դրած. իմ ֆոդին էդ ա: Դե բերիլ տո՛ւ, տե՛նամ:

— Լա՛վ, բերիլ կտամ, — ասում ա:

Եղ գշերն ըտենց անց ա կենում: Առավոտը որ լիսը բացվում
ա թե չէ, Զան-Փոլատը վեր ա կենում, էթում ավղուշ:

Աղջիկն էթում ա տղին մին-մին նազլ անում. — Ըսե՛նց, ըսե՛նց,
ըսե՛նց բան, — ասում ա, — ֆլան մեշումը, ֆլան ասլանի փորին
մի զութիկ կա, միջին իրեք ծիտ, Զան-Փոլատի ֆոդին հենց էդ իրեք
ծիտն ա, որ զրանց սըպանեցիր, իմաց կաց նրա բանը պրծած աւ

— Ղո՞րթ:

— Հո՛րթ. Զան-Փոլատը իրա բերնով ըսննց մին-մին, տեղը-
տեղին նազլ արեց:

— Բա՛ս լավ, —ասում ա տղեն, —ես էթում եմ. մնաս բա՛րին:

— Էթաս բա՛րին, աստոծ բարի ճամփա տա. բարո՛վ էթաս,
բարո՛վ գաս:

Տղեն ա՝ էն սհաթը Սև ձին նիլնում առյաշը աղջկա տսած-
մեշեն: Էթում ա, էթում ա, շատն ու թիշն աստոծ պիտա, մի օր, էր-
կու օր, իրեք օր, չորս օր, մախլասի մի շարաթ¹, սա՛ր, քա՛ր, քո՛տ
ոտի տակ տալի՝ անշախ որ համում ա մի եքա ծովի դրադ: Սև
ձին գալիս ա գալի՝ ըստե կաննում. դե՛ս ա ման գալի, դե՛ն ա ման
գալի, մի կոլոլ քարի կշտի տղին վե բերում:

— Վե՛ր արի, —ասում ա, — էդ քարը շուր տու. դրա տակին
ա սուրբ Սարգսի ծիու գյամը, վե կալ թաթխա ծովը, ձին էն սհա-
թը ընդիան դուս կզա: Դուս գալու բաշտան, էլ մի՛ թողա հանք
քաշի՝ գյամը դի բերանը, քշա՛: Մի քիչ տեղ որ կքշես. «Տղա, —
կասի ձին, — մուրազդ ասա՝, կատարեմ»: Կասես. «Իմ մուրազն
էն ա, որ ինձ անց կացնես ծովի էն դի՛ը, ընդե մի մեշա կա, մեշի
միշին մի ասլան, էդ ասլանին սըպանես՝ էլ զադ շէ»:

Տղեն իրա իմաստուն ձիու խոսքին անկաջ ա անում. էն սհա-
թը վեր ա գալի, քարը բանձրացնում, տենում ըհը՝, դորթ որ տա-
կին մի գյամ: Տանում ա թաթխում ծովը թե չէ՝ ալրիալը սուրբ
Սարգսի ձին ֆրունշացնելոն ծովիցը դուս ա գալի: էն սհաթը գյամը
տալիս ա բերանը, նիլնում, քշում: Քշում ա, քշում ա, մի քիչ տեղը
քշում ա, տենում ա ձին կաննեց, էլ երըմիշ շինում:

— Հը՛, սուրբ Սարգսի ձի, —ասում ա, — խի՛ կաննեցիր:

— Ասա՛ մուրազդ՝ կատարեմ, —ասում ա ձին:

— Իմ մուրազն էն ա, —ասում ա, — որ ինձ անց կացնես ծովի
էն դի՛ը. ընդե մի մեշա կա, մեշի միշին մի ասլան, էդ ասլանին
սըպանես, էլ զադ չէ:

— Աշխիս վրա, —ասում ա ու գովար բաց թողում, էթում:

էթում ա, էթում ա, հե՛նց ա էթում, հե՛նց ա էթում՝ ոնց որ
մի քամի: Մի օր, էրկու օր, իրեք օր էթում ա, ծովը կտրում, տա-
լիս դուս գալի դրազը. ըտեղ էլ զաթի մեշեն էր, իրան քցում ա

¹ Տպագիր տեքստում «Մախլասի մի շարաք» արտահայտությունը բանա-
հավաքի ձեռքով շնչված է. թողնում ենք այնպես, ինչպես տպագիր տեքս-
տում է (Ս. Կ.):

մեշեն։ Ասլանը հեռվանց տղին որ տեսնում ա ծիռւ վրեն՝ ուրախանում, աշխարով մին ա ընուամ։

«Աստոծ ըսօր ինձ ջուլստ ձեռով ա տվե, — ասում ա, — թամամ օխտը տարի իսանառողու մսի համ շեմ տեհե, անշախ մի ըսօր պտի ուտեմ, հասրաթս հանեմ»։

Ասում ա ու ատամները դրատացնելոն վրա հասնում, որ էրկանին էլ մի հանքի կով տա, Համա սուրբ Սարգսի ձին ո՛ր վրա շիքում, ասլանին ոտատակ տալի, շարդ ու խուրթ ա անում, խժըսում, թիքա-թիքա անում, թողում։ ասլանը հենց տեղն ու տեղը սատկում ա, մնում։ Տղեն էն սհաթը ծիռոցը վեր ա գալի, թուրք քաշում, ասլանի փորք ճողում, զութիկը ընդիան հանում։ Բաց ա անում, տենում՝ զո՞րթ որ իրեք ծիտ միշին ծլվլում են, էն սհաթը իրեքի ճիտն էլ քաշում ա։ Զան-Փոլատի ֆողին զաթի էս իրեք ծիտն ին, որանց ճիտը քաշում ա թի չէ՝ ալրիալը նա ընդե բանից պըրծնում ա։

— Տղա՛, — ասում ա ծին, — դե հմի նի՛լ վրես, տանեմ ծովն անց կացնեմ։

Տղեն նիլնում ա; ծովն անց կենում են էրեսը Ըստե ծիռւ գյամը հանում ա, իրան բաց թողում ծովը, գյամն էլ եդ տանում, զնում քարի տակը։ Աև ձին էլ հո ծովի զրադին էր, նիլնում ա, ընկնում ճամփա դպա Զան-Փոլատի ամարաթը։ Գալիս ա, գալիս ա, շատն ու քիշն աստոծ դիտա, մի օր, էրկու օր, իրեք օր, մախացաի մի շարաթ¹, հասնում ա ամարաթը։

Աղջիկն էն սհաթը դուա ա գալի, ճառվը փաթթվում։ — Տղա՛, — ասում ա, — էս հետ որ ես քոմն եմ, դու իմը, արի՛ որ Զան-Փոլատի ձեսիցը լավ պրծանք։

— Ղո՞րթ։

— Ղո՞րթ։ Չես ավատում, արի՛ տես։

Էթում ա տենում՝ դրուատ որ Զան-Փոլատը էրկեն մեկնվել ա, ո՞նչ սասր կա, ոնչ սամուրը Նո՞ր ըստե քոլ ու բարխանա են կապում, ինչ կար-շկար Զան-Փոլատի ամարաթումը՝ մալ, դոլվաթ, խաղինա, էրծաթ, ոսկի, բոլիանդ քոմմա բարձում են ծիանիքը, ընկնում՝ ճամփա։

1 Տպագիր տեքստում «մի օր, երկու օր, իրեք օր, մախասի մի շարաթ» արտահայտությունը բանահավաքի ձեռքով չնշված է. թողնում ենք այնպես, ինչպես տպագիր տեքստում է (Ծ. Կ.)։

էթում են, էթում են, էթում են՝ մի օր, էրկու օր, մի շաբաթ, էրկու շաբաթ, մի ամիս՝ հասնում են էն աղջկա ամարաթը, որ տղի հեննա կոխ էր պրծե, տղեն նրան տվել էր գեննովը: Հստիան էլ էդ աղջկանն ա վեր ունում, էլ եդ էթում իրա ճամփեն: Գալիս ա, գալիս ա, գալիս ա, շատն ու քիչն աստոծ գիտա, հառնում ա հոր քաղաքը: Խարարը տանում են թագավորին, թե պուճուր տղեդ, էրկու սի՞րում, նա՛շխուն, արեգակի կտոր աղջիկ էլ հետը՝ հրեն գալիս ա:

- Ղո՞րթ:
- Ղո՞րթ:
- Ո՞րդի ա:
- Հրե՞ ֆլան տեղը:

Թագավորը ուրախանում, աշխարով մին ա ըլնում; իրա նազիր-վեզրով, մենծ հեծելով դուս ա գալի աղաքը: Տղեն հորը տենալու բաշտան՝ ձիուցը վեր ա գալի, էթում ձեռը պաշում: Հեր ու տղա ըստե իրար փաթթվում են, լաց ըլնում, ուրախությունից ըսկի շեն էլ կարում խոսա. վեր են կենում գալի տուն: Մեկել աղպրտինքը իրանց սևէրեսությունից ամանջում, քիչ ա մնում գետինը մննեն. ըսկի պուճուր աղպոր աշքին էլա շեն էրևում:

— Դե՛, ասա՛ տենանք, ո՞րդի, — հարցնում ա թագավորը, — ախա՛ր էս ո՞նց էլավ, որ դու սաղ-սալամաթ եդ էկար. էսքամ տարի մեռանք քու ճամփեն պահելուն:

Նոր ըստե պուճուր տղեն նստում ա, մին-մին հորը նազլ անում աղպորտանց արարմունքը, ոնց որ ես ձեզ նազլ արի:

Թագավորը ըստոնք որ շի լսում՝ կտտաղում ա. — Զա՞նլաթ, — ձեն ա տալի:

Զանլաթները գալիս են թագավորին զլուխ տալի. — Ինչ կհրամայես, — ասում են, — թագավորն ապրած կենա:

— Կէթա՛ք, — ասում ա, — է՛ս սհաթը իմ վեց տղին էլ կրերեք աղաքիս քյալլա կանեք:

Պուճուր տղեն նոր աղաշանք, պաղատանք, թե. — Թագավորն ապրած կենա, աղպրտինքս ինչ մուխաննաթություն¹ արին՝ արին, բան շկա, նրանք էլ մերն են՝ յադ շեն, բաշխա՛: — Նոր որ թագավորը նրանց բաշխում ա:

Պուճուր աղպոր նշանածն էլ հո ուրախությունից շէր գիտա ինչ

¹ Տպագիր տեքստում՝ բերախառություն. ուղղումը բանահակաքինն է (Ս. 4.).

անի. էսքամ տարի խեղճի աշքը ջուր կտրեց նրա ճամփեն պահելոն; թագավորը նոր բերում ա սրանց պսակում. օխտն օր, օխտը գշեր՝ էլ ի՞նչ հարսանիթ, էլ ի՞նչ դափ-զուռնա, էլ ի՞նչ քեֆ, ուրախություն, որ էլ հալ ու հեսաք շկար:

Տղեն հետը բերած էրկու աղջիկն էլ՝ մինը տալիս ա թագավորի նազրի տղին, մինը՝ վեզրի:

Ասսանից իրեք խնձոր վեր ընկավ. մինն՝ ասողին, մինն՝ անկաշ դնողին, մինն էլ՝ ամսուն:

